



# ՄԱՆԿԱԿԱՆԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

6 ՓԵՏՐՎԱՐԻ  
2024 թ.  
№ 2 (1118)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին  
Երկշաբաթաթերթ • Իրատարակման 57-րդ տարի

ԽԱՂԱՏՈՒՐ ԱՐՈՎԹԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆՔԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

## ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆՊ, ՀԱՅՈ՛Ց ԲԱՆԱԿ

Հունվարի 28-ը Հայոց բանակի կազմավորման օրն է, 32-րդ տարին: Բանակ, որով հպարտացել ենք ու շարունակում ենք հպարտանալ: Հայ զինվորը մեր անվտանգության երաշխավորն է, մեր ապավենը, մեր հույսի առիավատյան: Եվ որքան կարգապահ է մեր բանակը, այնքան ավելի հզոր է, այնքան ավելի հավատ ներշնչող:

Հայ զինվորի ոգին անպարտելի է, բանակին զինվորագրվելու ուխտը՝ անխախտ:

Այս պատերազմում հայ զինվորը չպարտվեց, պարզապես դարանակալ թշնամին սպառազինությամբ ուժեղ էր և հարձակվեց անսպասելի: Դա թույլերին ու նեմ-գերին է բնորոշ:

Իսկ Եռաբլուրը մեր ցավի ու կարոտի խորհրդանիշն է, մեր կորուստների մարմնավորումը: Նրանք՝ բոլոր նահատակները, պաշտպանում էին Հայրենիքը, պաշտպանում էին արյամբ ձեռք բերված Անկախությունը՝ 21-րդ դարի սահմանագիծը հատած, բայց դեռ մարդ չդարձած վայրենուց: Հովհաննես Թումանյանն իր ժամանակին գրել է.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան  
Հազար դարուն հազիվ դառավ Մարդասպան,  
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար  
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Մենք ապավինում ենք Հայոց բանակին, հայ զինվորի բազկի ուժին, բայց 21-րդ դարի պատերազմն ուրիշ է, ուրիշ են աշխարհաքաղաքական ձգտումները, արդարությունը մոռացված կատեգորիա է, երբ երկրների նկրտումները հատել են բոլոր սահմանները:

Աստված տա, որ կարողանանք մեր մեջքը շտկել, հավատանք վաղվա խաղաղ օրվան, բայց չկորցնենք մեր զգոնությունը: Եվ սատարենք իրար, սիրենք մեր Հայրենիքը և հպարտանանք, որ մենք հայ ենք, և որ մեր խաղաղ արշալույսները հսկում են հայ քաջորդիները:



«Մենք չպետք է թույլ տանք, որ Անկախությունը, Ազատությունը, Հաղթանակը ժողովրդի համար դառնան սովորական գաղափարներ»՝ Վազգեն Սարգսյանի խոսքերն են՝ գոտեպնդող, հուսադրող: Իսկ հաղթանակներ դեռ կունենանք: Դու ընկճվելու իրավունք պարզապես չունես: Հնորհավոր տոնը, Հայոց բանակ:

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 30 ՏԱՐԵԿԱՆ Է

ՀՊՄՀ Ուսանողական խորհրդի համար 2024 թվականը հորեյանական տարի է:

Ուսանողական խորհուրդն արդեն 30 տարի ծավալում է լայնաշերտ, բազմաբովանդակ գործունեություն՝ ուսանողակենտրոն նախաձեռնություններով համախմբելով տարբեր սերունդների: Ուսանողական խորհուրդը եղել և մնում է մի մեծ ընտանիք՝ յուրօրինակ հարթակ, որտեղ ուսանողները, ուսումնական գործընթացներն զուգահեռ, ինքնադրսևորման, ինքնակրթության, հասարակական ակտիվության մեծ ճանապարհ են անցնում, ձեռք բերում ընկերներ:

30-ամյակին նվիրված ծրագրերի մեկնարկը տրվեց Մանկավարժական համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայում: 10 ֆակուլտետների ուսանողներն այստեղ կանցկացնեն իրենց վեցօրյա ձմեռային հանգիստը, միաժամանակ նոր մտահղացումներ ու նախաձեռնություններ կծրագրավորեն ընթացիկ ուսումնական տարվա համար:

Շնորհավոր 30-ամյակդ, սիրելի՛ Ուսանողական խորհուրդ: Հաջողություն ենք մաղթում քո բոլոր խիզախումներին:



# Հուշագրի սպորազրույց

Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը և «Ռուսական գրքի տուն» սոցիալ-մշակութային հասարակական միության նախագահ Միեր Ավետիսյանը հունվարի 26-ին հուշագրի ստորագրեցին կրթության ոլորտում լավագույն ուսանողներին խրախուսական դրամաշնորհներ տալու մասին: Համալսարանի յուրաքանչյուր ֆակուլտետից մեկ ուսանող, ըստ սահմանվելիք չափանիշների, կմասնակցի հայերի մեծ բարեկամ Ալեքսանդր Գրիբոյեդովին մվիրված մրցույթ-նախաձեռնությանը, որի նպատակն է ուսանողների կրթամշակութային ինտեգրումը, հայամպաստ գործունեություն ծավալած ռուս մեծ գործիչների կյանքի ու գործունեության մասին իրազեկումը, երիտասարդության կարողությունների զարգացումն ու անհատական մոտեցումները՝ կապված հայ-ռուսական կրթամշակութային կապերի և այդ գործում մեծ դեր ունեցած ռուս գործիչների հետ:

Ուսանողներին ընտրելու հիմնական չափանիշները հայ ժողովրդի մեծ բարեկամ Ալեքսանդր Գրիբոյեդովին մվիրված



մրցույթին մասնակցության ցանկությունն է և, իհարկե, բարձր առաջադիմությունը: Նախաձեռնության հեղինակները հորդորեցին նաև հաշվի առնել սոցիալական խնդիրներ ունող ուսանողների մասնակցությունը: Ի դեպ, յուրաքանչյուր ուսանող կստանա խրախուսական 100 հազար դրամ: Ռեկտոր Սրբուհի Գևորգյանը վստահ

հեցրեց, որ նախաձեռնությունը հետաքրքիր է և կարելի է այդ ուղղությամբ զբաղվի ծրագրեր իրականացնել տարբեր մասնագիտությունների ուսանողների մասնակցությամբ: «Մեր ուսանողներն ապագայի ապագան ձևավորողներն են, որոնք հնարավորություն կունենան այդ մշակութային բաղադրիչները փոխանցել հաջորդ սերունդներին»:

«Մանկավարժական համալսարանն ինձ համար ամենակարևոր հասցեն է, մեր ապագան կրթող ապագայի սերունդը գոնե պետք է իմանա՝ ով է Գրիբոյեդովը, ով մեծ գործ է արել հայի ինքնության պահպանման համար, ինչպես որ ռուս ժողովուրդն է ծանաչում և զմահատում հայ մեծանուն մարդկանց, ովքեր ապրել և ստեղծագործել են Ռուսաստանում», -ասաց «Ռուսական գրքի տուն» ՀԿ-ի հիմնադիր Միեր Ավետիսյանը՝ փաստելով, որ մրցույթը ինքնամպատակ չէ, որ այն կնպաստի նաև համագործակցության մոր ձևերի և ուղղությունների զարգացմանը:

## Մեկնարկային աշխատաժողով

Կայացավ Հայաստանում ներառական, թվային և կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի համար գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի ստեղծում (KPI4HE) էրազմուս+ ծրագրի մեկնարկային աշխատաժողովը:



Եռանյա ծրագրի համակարգողը Երևանի պետական համալսարանն է. գործընկերները՝ ԿԳՄՍՆ-ն, ՈԱՍԿ-ը, հայաստանյան 5 բուհ, այդ թվում՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, «Կրթական քաղաքականության և կառավարման հայկական կենտրոն» ՀԿ-ն: Եվրոպական գործընկերներն են Օլդեմբուրգի, Դրեզդենի տեխնիկական և Ջեմովայի համալսարանները:

KPI4HE ծրագրի նպատակն է բարելավել բարձրագույն կրթության համակարգի կառավարումը, համալսարանների ռազմավարական պլանավորումը: Դրանք

կնպաստեն որակյալ ու ներառական, թվային և կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության զարգացմանը Հայաստանում բարձրագույն կրթության գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի (ԳԱՑԱՀ) մշակման և ներդրման, ինստիտուցիոնալ հետազոտությունների կառուցակարգերի զարգացման և պլանավորման ծառայությունների գործարկման, ինչպես նաև հաստատությունների հավատարմագրման պետական չափանիշների վերանայման միջոցներով (համաձայն ԳԱՑԱՀ-ի):

Մասնակիցներին ողջունեցին, նախագիծը, կրթական համակարգում ներդրվող փոփոխությունները կարևորեցին և արդյունավետ աշխատանք մաղթեցին ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ԿԳՄՍ փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը, Հայաստանում Երազմուս+ ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան:

Աշխատաժողովին մասնակցում էին նաև ՀՊՄՀ-ի



Կրթական գործընթացների կառավարման և բարելավումների վարչության պետ Սամվել Ասատրյանը, Օտար լեզուների ֆակուլտետի ղեկավար Տիգրան Միքայելյանը, Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչի պաշտոնակատար Սիրինե Շողերյանը, ինչպես նաև Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի աշխատակիցներ Ռախսա Ավետյանն ու Գոհար Առաքելյանը:

Համաժողովի ընթացքում ներկայացվեցին նախագծի նպատակները, արդյունքները, գործողությունների պլանը, առաջին տարվա գործունեությունը, աշխատանքային փաթեթները, ինչպես նաև ֆինանսական կառավարման կանոնները:

Խմբային աշխատանքներն իրականացվեցին համալսարանի կառավարում, ինստիտուցիոնալ հետազոտության հիման վրա կարողությունների զարգացում, կանաչ ռազմավարական պլանավորում, ուսումնական գործընթացի կազմակերպում, բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարություն, որակի ապահովում ուղղություններով:



## Մասնակցեցին միջազգային առցանց գիտաժողովին

Մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսներն ու ասպիրանտը մասնակցեցին Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի նախաձեռնությամբ անցկացված «Գրադիենտ մաթեմատիկայի բնագավառի ուսուցիչների և հետազոտողների II միջազգային առցանց գիտաժողովին»:

Հավելենք, որ ՀՊՄՀ-ն մասնավորապես Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը տարիներ շարունակ համագործակցում են:

Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լուսինե Ղուլղազարյանը, դոցենտ Վարդգես Վարդազարյանը, դասախոս-մեթոդիստ Աղավնի Գրիգորյանը առցանց գիտաժողովին ներկայացրին Հայաստանում նոր առարկայական չա-

փորոշիչների համաձայն ավագ դպրոցում դասավանդվող դիսկրետ պատահական մեծություններն ու դրանց թվային բնութագրիչների ուսուցման մեթոդիկայի հիմնահարցերը:

Պրոֆեսոր Գուրգեն Ղուլղազարյանն անդրադարձավ մաթեմատիկական անալիզի բուհական դասընթացում ֆունկցիայի ուռուցիկության և զոգավորության սահմանումներին, հատկություններին և կիրառություններին, պրոֆեսոր Սամվել Հարությունյանը ներկայացրեց նոր առարկայական չափորոշիչների համաձայն «Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի երկրաչափության նոր դասագրքի մասին» զեկուցումը, իսկ ասպիրանտ Սաբինա Գասպարյանը՝ ավագ դպրոցում ֆունկցիայի պարբերական

ության սահմանումներին, հատկություններին և կիրառություններին, պրոֆեսոր Սամվել Հարությունյանը ներկայացրեց նոր առարկայական չափորոշիչների համաձայն «Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի երկրաչափության նոր դասագրքի մասին» զեկուցումը, իսկ ասպիրանտ Սաբինա Գասպարյանը՝ ավագ դպրոցում ֆունկցիայի պարբերական

մության հայտանիշների կիրառությունը: Գիտաժողովի ամփոփմանը ծավալվեց ակտիվ քննարկում վերոհիշյալ հարցերի շուրջ, ինչպես նաև պայմանավորվածություն ձեռք բերվեց ՀՊՄՀ-ի Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոսների և Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի Մաթեմատիկայի և ֆիզիկայի բաժանմունքի թվային կրթության ինստիտուտի դասախոսների միջև ակտիվ համագործակցության, փորձի փոխանակման և համատեղ հետազոտությունների կատարման վերաբերյալ:

Ցանկացած նախաձեռնություն նոր համագործակցային կապերի սերտացման հնարավորություն է, որը հնարավորություն է տալիս մասնագիտական հարցերի շուրջ համատեղ լուծումներ գտնել:

Условная вероятность

Пример. Из коробки, содержащей 3 красных и 5 черных шаров, последовательно взяли 3 шара. Какова вероятность, того, что все 3 шара оказались черного цвета?

Формуле умножения вероятностей

$$A_1, A_2, A_3 = P(A_1)P(A_2 | A_1)P(A_3 | A_1, A_2)$$

$$A_1) = 5/8.$$

$$A_2 | A_1) = 4/7.$$

$$A_3 | A_1, A_2) = 3/6 = 1/2.$$

Компоя вероятность равна:

$$A_1, A_2, A_3) = (1/2) \cdot (4/7) \cdot (5/8) = 5/28.$$

Рис. 1. Представление условной вероятности в виде графа

Например, вероятность того, что будут вынуты два красных и один черный шары будет равна

$$P = P_1 + P_2 + P_3 = \frac{5}{56} + \frac{5}{56} + \frac{15}{56}$$

Лусине Гургеновна Гуглазорян

# Հունվարի 28-ը՝ Հայոց բանակի կազմավորման օրն է, 32-րդ տարին

Հրատարակում

## Ես փեր եմ իմ ժամանակին

(Ես՝ ապրելու կոչվածս)

Հայրենիքները չեն տրվում մեկընդմիջ: Հայրենիքները նվաճվում են ամեն օր: Բայց ընդմիջ տրված հայրենիքներ չկան: Վատ որդիներ են այն որդիները, որ իրենց հայրերի տան տեղը իրենց տները չեն բարձրացնում: Վատ սերունդներ են այն սերունդները, որ իրենց հայրենիքները նորից չեն գտնում: Ոչ մի ժամանակ, ոչ մի սերունդ, որտեղից և ունից էլ սերված լինի, մեկընդմիջ տապալակված չէ փչանալու ժամագից: Եվ եթե կարծե՞ք՝ ապահովագրված է, ավելի լավ հարևանի համար, որ քո հացն ու ջուրը հավիտյան քաղցր գիտի, և քեզ, ուրեմն, շատ գիտի, և քո կանանց՝ հարձեր, և միշտ, ամեն լուսաբացի ու Աստուծո ամեն մայրամուտի հետ, փորձելու է պարիսպներդ ամրությունը:

Պարիսպդ եթե ամուր եղավ ու շներդ զարթուն, նա քեզ հարևան է մնալու՝ ոչ չար, ոչ բարի՝ հարևան: Հորդ տունն ու պարիսպը և անունն ու համբավը քո ծեռքով ու քեզանով եթե նորոգ չգտավ, դու ուրեմն չկաս: Հետո գնա նստիր օտար երկրներին տակ ու փախստականի տանջված ոտներդ տորրելով, գանգատվիր սրտիդ ուզածի չափ, թե՛ ախ, հորս բերդերն ու պարիսպները, հորս արտերն ու այգիները, հին վեհագույնների մեջ իմ բարձր, նախնու շուքն ու փառքը: Իսկ քո՞նր, քո՞նր, քո անձնակա՞նը, քրտիքի քո կաթի՞լը՝ քո դրած տունկի, քո արյան շիթը, քո սահմանների վրա, բերանդ ծվատող քո համբույրը այն երկրին, որ գուցե ևս կապես քո նախնուն էր, բայց այսօր արդեն քոնը չէ: Օտար դատավորների առջև կանգնած գրկվածիդ մեջ չէ, որովհետև երկիրդ ապավինեցիր նախնայաց պարիսպներին ու նախնուդ Աստուծո գործընկերը: Աստուծու տված բնույթը գիտես. Աստված միշտ արթուն ուղջերի հետ է:

Հայրենի՞քը... Հայրենիքը դու ես, իմ ապրած ժամանակի մեջ: Կա՞՞ այդ ժամանակի մեջ քո ծննդյան ճիչը, քո կյանքի երգը, կյանքի քո կարոտը, քո շառագուն ընդգլուսում ու տիրակալան համբերությունը: Լո՞ւմ է, լռո՞ւմ է, չկա՞՞ քո երգը քո ժամանակի մեջ՝ չկաս դու, չես եղել, չի եղել իմ ժամանակը:

Այդպիսի ժամանակ առհասարակ չի եղել: Պատմությունը մկրտող զգել-կտրել, նետել է քո ժամանակը քեզ հետ, ծայրը ծայրին բերելով՝ կցնցել ուրիշներին, ուրիշ ժամանակներին:

Այսօրվա իմ կայուն ներկայությունը պարտադիր է, որպեսզի մույնիսկ եղածը եղելություն լինի: Եվ իմ բացակայությունն այսօրվա մեջ, զինվորիս բացակայությունը այսօրվա մեջ պարպելու, ամայելու է ոչ միայն իմ ապագան իմ երկրում, այլև անցյալս:

Զիվորի իմ բացակայությամբ այդ պատմաբան-հնէաբանները իմ երկրի անցյալը հարմարեցնելու են իրենց ցեղերի ապագային: Նրանք տեսություն են հորինել ու ամեն օր թույն են կաթեցնում ականջս, թե ազգերը հնանում, եկողները ասպարեզից հեռանում են, թե ցեղեր են գալիս, ցեղեր են գնում:

Զինվորի իմ վստահ ներկայությունը ոչ է ասելու նրանց, ասելու է՝ հավերժորեն նորոգվում են ազգերը, և որդիները իրենք նորոգ հայրերն են, և նախնիներիս պատկերների հին աստվածները գորանում են իմ եռանդով և ճիշտ իմ պատկերին են գալիս: Զինվորի իմ և քո ներկայությունն այսօրվա մեջ շատ է հարկավոր, պարտադիր անհրաժեշտություն է, չարքաշ, լուռ զինվորի և ոչ խփող, փախչող ավազակի:

Իմ ու քո մարմինը, գիտես, գանազան նյութերի շատ քմահաճ միություն է, չի սիրում աշխատել, դիմանալ, համբերել, կանգնել, չի սիրում մտքի ու մկանի ճիգով վաստակել իր հացն ու փառքը: Ուզում է ավարել ու փախչել: Սանրիկ այդ ավազակի ականջը մի րոպե բաց թողեցի՞ք, արձակվելու, ծեռքը գեղքի է մեկնելու, և գուցե թե գնա ու իր համար մույնիսկ անուն բերի՝ խիզա՞խ, կտրի՞ճ, քա՞ջ, հերո՞ս, ազա՞տ:

Բայց արժանավայել ավազակն է, որովհետև ասված է. «Զենքը ամեն մարդի բան չէ»: Եվ դարձյալ ասված է. «Ձիու վրա էր՝ Աստուծո էր մոռացել, ձիուց իջեցրին՝ ձիուն է մոռացել»: Ձիու վրա Աստուծո մոռացողներս քիչ չենք: Ուրեմն՝ այս հայրենիքի զինվորը չենք, զինվորացուն էլ չենք: Հայաստա-

նի Հանրապետություն ասված եզակի մոնումենտը հայոց մեր երկար դարերի մեջ իմ ու քո աշխատանքային կամքի վրա է հավաքվելու: Յուրաքանչյուրիս հոգու մանրիկ ավազակի հետ ոչ մի հույս չկապե՞ք: Նա բռն տանող չէ, նա օջախը վառ պահող չէ, նա տեղում կանգնող չէ: Հայաստանի Հանրապետության մոնումենտի ծեփը նրան չի բռնի և չի բռնելու երբեք:

Մեր վստահ ու լուռ գոյությունը համարի պողպատիդ պինդ ներկայությունը տաճարների կառույցներում: Այս տարածությունները ի մի է հավաքելու, պետությունը կորոզային կառույց է դարձնելու զինվորը, ես ու դու, մենք:

Ծանր է թշնամու ատելության մեջ ապրել: Բայց անտանելիորեն անհնար էր լինելու նրա արհամարհանքի մեջ քարշ գալը: Ծանր է պարտությունը, բայց ավելի ծանր՝ փախչելը: Շփոթված դեսուդեն ես ընկնում, քեզ պատերով ես խփում և չես ազատվում, չես հեռանում թշնամու քանափանքից, որովհետև դա նաև քո քանափանքն է քեզ:

Քո նախնին իր և քո ճակատից սրբել է այդ կարմիր ամոթանքը: Թշնամու քանափանքի բեռը նետել է իր և մեր հոգուց: Այսօր էլ ես կհաստատեմ. իմ նախնու ժառանգն եմ, և իմ խիղճն մաքուր կլինի և ընթացքս՝ թեթև:

Մեր ներկայությամբ երկիրդ Հայաստան է ասվելու, մայրդ՝ մայր, քույրդ՝ քույր, կաթողիկոսդ՝ վեհափառ է կոչվելու, և նախագահդ՝ նախագահ: Թե չէ գիտես աշխարհի լեզուն անասանունորեն բառաշատ է, ուրիշ բառեր ունի և երկիրդ, և կաթողիկոսիդ, և հենց ինձ ու քեզ համար: Ինձ ու քեզ... Խլանամ ու չլսես: Կուրանամ ու չտեսնես այդ օրը:

Ես՝ զինվորս, կանգնելու եմ մեն մի անգամ, մի եզակի անգամ իմ տրված ժամանակի մեջ և ասում եմ. «Ես՝ ես եմ, ես տերն եմ իմ ժամանակի, ես իմ ժամանակի տերն եմ, այս իմ չարչարված երկիրն է, որ ես հայրենիք եմ դարձնում, իմ հայրենիքը: Իմ պարտությունն այսօր ամեն ինչի վերջն է: Աստված չանի, անտեր հուշեր չեն լինում: Ամեն, ամեն ինչի վերջն է: Իմ հաղթանակն այսօր սկիզբն է ամեն ինչի գոյության, երեկվա հաղթական կանչերի և այսօրվա իմ փառքի, ծնողիս սուրբ գերեզմանի և երեխայիս զնգուն օրվա: Սկիզբն է ամեն, ամեն ինչի»:

1992 թ., գրվել է ազգային բանակի հիմնադրման կապակցությամբ

## Էրազմուս+ նախագծերի միջև փորձի փոխանակում

Էրազմուս+ նախագծերի միջև փորձի փոխանակման շրջանակներում կայացավ առցանց համոդիպում, որին մասնակցում էր նաև ՀՀԿՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը:

Համոդիպման նպատակն էր ներկայացնել փորձառու բուհական ներկայացուցիչների փորձը, կարևոր խորհուրդներ և հնտություններ, որոնք անհրաժեշտ են Էրազմուս+ նախագծերի մշակման և իրականացման գործընթացում:

Համոդիպումը միտված էր նաև աջակցել և նախագծերի մշակման լավագույն փորձը փոխանցել այն բուհերին, որոնք պլանավորում են դիմել Էրազմուս+ «Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում» գործողությանը, որի վերջնաժամկետը փետրվարի 8-ն է:

Պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը «Հաղորդակցություն» թեմայի շրջանակում Էրազմուս+ նախագծերում գործընկերների միջև միջմշակութային և գործնական հաղորդակցության հաստատման և պահպանման իր փորձը ներկայացրեց:

Էրազմուս+ նախագծերի ընտրության չափանիշները, ինչպես նաև յուրաքանչյուր տարածաշրջանի համար



2023 թվականի «Էրազմուս+ Առաջարկների մրցույթի ընտրության արդյունքներն ու միտումներն» առցանց համոդիպմանը ներկայացրեց Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան:

Որակի ապահովման մեխանիզմների, Էրազմուս+ նախագծերի աշխատանքային գործընթացների վերահսկման և բարելավման մոտեցումների վերաբերյալ խոսեց Գավառի պետական համալսարանի Արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը, իսկ «Տե-

սանելիության բարձրացման մոտեցումներ» թեմայի շրջանակում կրթական հաստատությունների բրենդավորման և նախագծերի առաջխաղացման կարևորությունը ներկայացրեց Հայաստանի եվրոպական համալսարանի Միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Գոհար Ավետիսյանը:

Առցանց համոդիպումն ամփոփեց Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Միջազգային կապերի բաժնի պետ Գարեգին Համբարձումյանը: Բանախոսը «Բյուջեի կազմման մոտեցումները (Lump sum)» «Կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում» Գործողության շրջանակում» ներկայացրեց տվյալ ծրագրի բյուջեի հաշվարկման և հայտերի ներկայացման մանրամասները:

Մասնակիցներն առցանց համոդիպումը կարևորեցին Էրազմուս+ ծրագրի Գործողություններին դիմելու, մասնավորապես՝ նախագծի առաջխաղացման և տարածման, ֆինանսի պլանավորման, ինչպես նաև որակի ապահովման մեխանիզմների մշակման և կիրառման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու տեսանկյունից:

## Ռուբեն Մարգարյանի «Ճակատագրի գեղարվեստ» գրքի շնորհանդեսը

Հունվարի 21-ին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում տեղի ունեցավ բաց դաս՝ «Խոսքի ուժը» թեմայով:

Դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանի հրավերով միջոցառման շրջանակներում դպրոց էր այցելել հայտնի փաստաբան, գրող և հասարակական գործիչ Ռուբեն Մարգարյանը:

Տեղի ունեցավ վերջինիս «Ճակատագրի գեղարվեստ» («Копье судьбы») գրքի շնորհանդեսը, որտեղ գեղարվեստականորեն ներկայացված է աստվածամուկա Սուրբ Գեղարդի պատմությունը: Այն առաջին դարի երկրորդ կեսին Հայաստան է բերել Քրիստոսի 12 առաքյալներից և Հայոց առաջին լուսավորիչներից Սուրբ Թադևոսը: Ընթերցողը հնարավորություն ունի ճանաչել ոչ միայն Սուրբ Գեղարդի պատմության դրվագները, այլ նաև գրքի հերոսների արկածների միջոցով իմանալ նրա դերն ու նշանակությունը համաշխարհային ասպարեզում:

Հարկ է ընդգծել, որ պարոն Մարգարյանը Հայ Առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի անվճար իրավաբանական օգնության կենտրոնի ղեկավարն է, Ռուս փաստաբանների գիլդիայի նախագահի տեղակա-

լը: Միևնույն ժամանակ, նա «ЗАКОНИЯ» հայտնի իրավաբանական հարթակի գլխավոր խմբագիր, «Մարդ և օրենք» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, Ռուսաստանի գրողների միության անդամ, ինչպես նաև Ռուսաստանի փաստաբանության և ճյուղափառի ակադեմիայի, Աշխատանքի և սոցիալական հարաբերությունների ակադեմիայի պրոֆեսորն է: Նա իր երկարամյա արդյունավետ գործունեության շնորհիվ արժանացել է բազմաթիվ մրցանակների: 2021 թվականին «Ռուսի գրիչ» անվանակարգում ազգային մրցանակի դափնեկիր է:

Ներկաները հնարավորություն ունեցան մասնակցելու ճանաչողական քննարկմանը, հարցեր տալ հեղինակին և հենց նրանից էլ իմանալ գիրքը գրելու մտահղացման ճանապարհը: Ավագ դասարանների սաներից շատերն արդեն ընթերցել էին ստեղծագործությունը: Նրանք ընդգծեցին, որ գիրքը գրված է հասկանալի, հետաքրքիր ոճով են ներկայացված Հայաստանի տեսարժան վայրերը: Ի դեպ, գրքի նկարագրողները կատարված է վաստակաշատ նկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ, ճարտարապետության պրոֆեսոր, Ռուսաստանի նկարիչների ակադեմիայի թղթակից-անդամ Աշոտ Թադևոսյանի (Տաթևի) կողմից, ով



բազմիցս եղել է «Վերածնունդ» դպրոցի հյուրը: Ունկնդրելով լսարանի կարծիքները, գրախոսությունները, հետաքրքիր մեկնաբանությունները՝ Ռուբեն Մարգարյանը հաճելիորեն զարմացած էր և ուրախ, որ գրուցեց մնացած ընթերցասեր ու պատրաստակամ երիտասարդության հետ: Հեղինակը դպրոցի սաներին նվիրեց «Ճակատագրի գեղարվեստ» նոր գիրքը՝ իր ինքնագրերով:

# Մանկավարժականում և Բազելի Արվեստների համալսարանի պատվիրակությունը

ՀՊՄՅ-ի և «Արտաս» հիմնադրամի միջև համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրով Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում է Շվեյցարիայի Բազելի Արվեստների համալսարանի պատվիրակությունը՝ 9 ուսանող և 4 դասախոս: Ծրագիրն իրականացվելու է փետրվարի 5-ից 19-ն ընկած ժամանակահատվածում: Հավելելնք, որ սա ծրագրի երկրորդ փուլն է, իսկ առաջին փուլում, որն իրականացվել է 2024 թվականի հունվարի 20-ից փետրվարի 3-ը, Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 9 հայ ուսանող և 1 դասախոս՝ Տարոն Ալեքսանյանը, մեկնել են Շվեյցարիայի Բազելի Արվեստի համալսարան՝ երկշաբաթյա պրակտիկա անցնելու նպատակով: Այնտեղ համագործակցելով Բազելի Արվեստի համալսարանի ուսանողների հետ, իրականացրել են արվեստի դասընթացներ դպրոցների աշակերտների համար, միաժամանակ այցելել են Շվեյցարիայի տարբեր տեսարժան վայրեր՝ ծանոթանալով տեղի մշակույթին:



վանդել՝ ներկայացնելով տարբեր մեթոդներ, խոսել թանգարաններում, համալսարաններում և դպրոցներում ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերի մասին:

«Ուսանողները միշտ սովորելու բան ունեն, սակայն մենք էլ կարող ենք աշխարհին ցույց տալ մեր հարուստ մշակույթը, ներկայացնել հայ արվեստի առանձնահատկությունները», -վստահեցնում է հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչը:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ասիստենտ Տիգրան Դավթյանը վարպետության դաս է անցկացնելու պատվիրակության համար:

«Փորձելու ենք ներկայացնել ձեռքի ավանդական աշխատանքներ, որովհետև Շվեյցարիայում ավելի շատ ընդունված են տեխնոլոգիաներով աշխատանքները: Մեր համալսարանում էլ ունենք համակարգչային լսարաններ, որտեղ դասավանդում ենք, բայց նրանց մոտ շատ ավելի զարգացած են տեխնոլոգիայի միջոցով կատարվող աշխատանքները: Մեզ մոտ ամեն

րար լրացնող ծրագրեր են, իրար շարունակություն»:

Հողակաթ Մլքե-Գալստյանը ցավով նկատում է, որ արվեստի ուսուցումը Հայաստանի դպրոցներում այնքան էլ չի կարևորվում, որքան Շվեյցարիայում: Այնտեղ այն չի դիտվում որպես երկրորդական առարկա: Երբ առարկան կարևորվում է, կարևորվում են նաև դասախոսն ու դասը:

Բազելի համալսարանում դասաժամն ավելի երկար է՝ 80 րոպե. սա ինչ-որ առումով մեր ուսանողների համար մարտահրավերային էր՝ 80 րոպե օտար լեզվով դասավանդելը:

Հողակաթ Մլքե-Գալստյանը նկատում է՝ մեր ուսանողների մոտ ավելի ընդգծվեց հարգանքն իրենց մասնագիտության հանդեպ. եթե մինչև այդ մեր ուսանողներն իրենց ավելի շատ նկարիչ էին համարում, ծրագրին մաս-



րաններում: Օտարերկրյա պատվիրակները կայցելեն Հայաստանի տեսարժան, մշակութային վայրեր:

«Արտաս» հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Հողակաթ Մլքե-Գալստյանը խոսեց ծրագրի նպատակների և կարևորության մասին:

«Նախորդ անգամ մեր պատվիրակությունը Տյուրիխի Արվեստների համալսարան էր այցելել: Այս անգամ համագործակցությունը Բազելի Արվեստի համալսարանի հետ էր, թեև մասնակցում էին նաև Շվեյցարիայի տարբեր համալսարանների ուսանողներ: Բազելը հիշեցնում է մեր Գյուլիստի արվեստների ու արհեստների քաղաք: Մեր ուսանողները առաջին անգամ էին այցելում և բացահայտում նման մշակութային երկիր:

Չորսշաբաթյա ծրագրի երկու շաբաթն անցկացվեց Շվեյցարիայում, 2 շաբաթն էլ նախատեսվում է Հայաստանում՝ Մանկավարժական համալսարանում. սրանք ի-

րար լրացնող ծրագրեր են, իրար շարունակություն»:

Հողակաթ Մլքե-Գալստյանը ցավով նկատում է, որ արվեստի ուսուցումը Հայաստանի դպրոցներում այնքան էլ չի կարևորվում, որքան Շվեյցարիայում: Այնտեղ այն չի դիտվում որպես երկրորդական առարկա: Երբ առարկան կարևորվում է, կարևորվում են նաև դասախոսն ու դասը:

Բազելի համալսարանում դասաժամն ավելի երկար է՝ 80 րոպե. սա ինչ-որ առումով մեր ուսանողների համար մարտահրավերային էր՝ 80 րոպե օտար լեզվով դասավանդելը:

Հողակաթ Մլքե-Գալստյանը նկատում է՝ մեր ուսանողների մոտ ավելի ընդգծվեց հարգանքն իրենց մասնագիտության հանդեպ. եթե մինչև այդ մեր ուսանողներն իրենց ավելի շատ նկարիչ էին համարում, ծրագրին մաս-



նակցելուց հետո նրանց մոտ ավելի կարևորվեց մանկավարժի դերը: Նաև հետաքրքրություն առաջացավ դեպի ակադեմիական կրթությունը: Այն գիտակցումը կար, որ կարող ես չունենալ ռեսուրս, բայց քո դասը կարող է լինել հետաքրքիր ու գրավիչ, ինչը տեսան շվեյցարական դպրոցներում:

Մեր ուսանողները Բազելի համալսարանում տարբեր դասախոսություններ են լսել, իսկ դպրոցներում դասա-

ինչ սկսվում է՝ աշխատեցնելով միտքը, ձեռքը, նկարչությունը, որովհետև շատ կարևոր է, նոր միայն նրանից հետո՝ տեխնոլոգիան, որը դարձել է 21-րդ դարի գործիք:



Ի տարբերություն մեզ, նրանց մոտ ավելի շատ զարգացել է միտքը, ավելի շատ զարգացել է տեխնոլոգիան, բայց կորցրել են ձեռքի աշխատանքը», -ասում է Տիգրան Դավթյանը: Նա օտարերկրյա ուսանողներին վարպետության իր գաղտնիքները կբացի. ավանդական գործիքների միջոցով շվեյցարացի ուսանողները փորձիկ դեկորատիվ զարդեր կպատրաստեն և կկրեն որպես հուշ:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Արա Հակոբյանը բարի գալուստ մաղթեց պատվիրակության անդամներին, ներկայացրեց գեղեցիկ կահավորված լսարանները, որտեղ դասավանդող դասախոսների ստեղծագործական աշխատանքներն են ցուցադրված, իսկ ղեկանի տեղակալ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Արմինե Բաղդասարյանը պատվիրակության համար շրջայց կազմակերպեց դեպի ֆակուլտետների արվեստանոցներ ու արհեստանոցներ:

**Սիլվա ԱՄՐՅԱՆ**

# Մասնակցեցին «Դասախոսական գավաթ-2024»-ի մրցումներին



Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի նախաձեռնությամբ ՀՊՄՅ-ում հունվարի 23-30-ն անցկացվեց «Դասախոսական գավաթ-2024» 12-րդ միջբուհական մարզական խաղերը:

Այս տարի առաջնությունը ներառում էր 6 սպորտային մարզաձև՝ հրաձգություն, սեղանի թենիս, արագ շախմատ, բասկետբոլային նետումներ, բաղմինտոն, պարանի ձգում: Այդ սպորտաձևերում ուժերը չափեցին հայաստանյան 15 բուհի շուրջ 200 դասախոսներ և աշխատակիցներ: Տարիներ շարունակ մեր համալսարանի դասախոսները մասնակցում են այդ մրցաշարին՝ տարբեր մարզաձևերից գրավելով մրցանակային տեղեր: Այս տարին ևս բացառություն չէր:

Մեր դասախոսները մասնակցեցին հրաձգային մարզաձևի մրցումներին՝ մարզիչ Իվան Կարապետյանի գլխավորությամբ:

Այս մարզաձևում մեր թիմը ներկայացնում էր բուհի Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Վահագն Խառատյանը, ով անհատական մրցապայքարում զբաղեցրեց առաջին հորիզոնականը՝ խոցելով 50 հնարավորից 49 թիրախ:

Վահագն Խառատյանն արժանացավ մեդալի, պատվոգրի և ստացավ խորհրդանշական պարգև:

Հավելելնք նաև, որ Հայաստանի ուսանողական ֆեդերացիան, ամփոփելով անցյալ տարվա արդյունքներն այս մարզաձևում, Մանկավարժական համալսարանի թիմին արժանացրեց պատվոգրի՝ ակտիվ մասնակցության և մրցանակային տեղեր զբաղեցնելու համար:



# Միլվա ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ -105



**Տիկին Դեմիրճյան, բանաստեղծուհի Միլվա Կապուտիկյանի կյանքի ու ստեղծագործական ժառանգության էջերից ի՞նչ կուզեիք ներկայացնել, որին ուսանող երիտասարդությունը թերևս այնքան էլ ծանոթ չէ:**

Եթե երկու մասի բաժանենք Միլվա Կապուտիկյանի ստեղծագործությունները, կտեսնենք, որ ավելի երիտասարդ տարիքում նա գրել է բանաստեղծություններ, իսկ հասուն տարիքին անցնելիս՝ նաև արձակ: Մի անգամ նրան նույնիսկ հարց տվեցին.

«Տիկին Միլվա, Դուք արդեն արձակագիր եք:

Նա պատասխանեց.

«Ես եղել եմ և կմնամ իմ ազգի բանաստեղծուհին:

**Միլվա Կապուտիկյանի ծննդյան 105-ամյակի առթիվ մեծ նվեր եղավ «Էջեր փակ գորոցներից» գրքի նոր հրատարակությունը... Ի՞նչ է բացում այն մեր ընթերցողների առջև...**

Վերջերս վերահրատարակված «Էջեր փակ գորոցներից» գրքում, որը տպագրվեց Մայր Աթոռ Սուրբ Եջիմածնում՝ Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ, բանաստեղծուհին հորը և հորեղբորը նվիրված գլխում ասում է. «Թեմաներ կան, որոնց ծանրությանը բանաստեղծությունը չի դիմանում, բանաստեղծության ոտքը կարծես այսօր էլ, բանաստեղծությունը ճաք է տալիս...»: Եվ ուզած-չուզած նման թեմաները բանաստեղծուհին ներկայացրել է արձակի ժամում: Լինելով մեծ հռետոր, ամբիոններից մշտապես համարձակ խոսք ասելով, այնուամենայնիվ, նա իրեն այդ ոլորտում որպես հրապարակախոս չէր դիտարկում: Բայց երբ լույս ընծայվեց «Էջեր փակ գորոցներից» գիրքը, հասկացան, որ ինքը ժամանակի անենամեծ հրապարակախոսն է, չասենք հրապարակախոսներից մեկը:

Գիրքը 1997 թվականին հրատարակվեց ընդամենը 1000 օրինակով, մինչդեռ Կապուտիկյանի գործերը 30-40 հազար տպաքանակներով են մշտապես լույս տեսել... Մոսկվայում նրա գրքերը տպագրվում էին միլիոնավոր տիրաժամերով: Մեկ շաբաթում այս գիրքը սպառվեց: Թանգարանում ընդամենը 2 օրինակ մնաց: Ես մտածում էի գիրքը վերահրատարակելու մասին, և վերջապես ստացվեց: Ես և Սելյանուհի Գեղամյանը մեծ աշխատանք արեցինք և նոր ուղղումներով ու ծանոթագրություններով այն լույս տեսավ: Մեծագույն շնորհակալություն Գարեգին Բ Կաթողիկոսին, ում հովանավորությամբ 700 էջանոց գիրքը այս անգամ տպագրվեց 300 օրինակով:

Ամբողջ արցախյան շարժումը 2-րդ և 3-րդ գլուխներում ներկայացված է ամենայն պարզությամբ: Միլվա Կապուտիկյանը բանաձևներով տալիս է ինչից սկսվեց արցախյան առաջին պատերազմը... Սա տարբեր տարիների հոգվածների ամփոփում է. դեղին թրթրից հոդվածները, ելույթները գրքում գետնից են անառն խմբագրվելու, և դրանով էլ այն արժեքավոր է:

Միլվա Կապուտիկյանն ասում է. «Պարաբաղը և Նախիջևանը իմ գիտակցական կյանք մտան Ավ. Իսահակյանի շնորհիվ... Այսինքն, 1988 թվականը նրա համար սկսվել է դեռևս 1959 թվականից, երբ Գուրգեն Գաբրիելյանի և Բագրատ Ուլուբաբյանի հրավերով այցելեց Արցախ, և նրա ահագանգերի շնորհիվ է, որ Դադիվանքը մաքրվեց արտերությունից:

**ԳԱԹ մասնաճյուղ Միլվա Կապուտիկյանի տուն-թանգարանի վարիչ, բ.գ.թ. Արմենուհի Դեմիրճյանի շնորհիվ տուն-թանգարանը դարձել է խոսքի մշակույթի, պոետի ստեղծագործությունների ու գործունեության հետ իրական հանդիպումների մի հրաշալի կենտրոն:**

**Բանաստեղծուհու ծննդյան 105-ամյակի առթիվ գրուցեցինք տիկին Դեմիրճյանի հետ՝ փորձելով ուսանող երիտասարդության համար բացահայտել բանաստեղծուհու կյանքի «փակ գորոցների էջերը»:**

## «Ես եղել եմ և կմնամ իմ ազգի բանաստեղծուհին»

Եղեմնի 65-ամյակի համազգային շարժման օրերին նա ելույթ էր ունենում Մոսկվայի հայկական եկեղեցու բազմամարդ բակում: 88-ի զարթոնքին համակարգում էր Արցախին ուղարկվող օգնությունը՝ դրան ավելացնելով նաև իր հոնորարները: Նա իսկական քաղաքացի էր, ազգի դուստր: Քաղաքացիական այդ մեծ ակտիվությամբ էլ, սակայն, ամենայն գզուշավորությամբ էր մոտենում երկրի փլուզման իրադարձություններին, տագնապ ուներ վաղվա օրվա հանդեպ և միգրացի կանխագույն էր այսօրը:

Սիյուռքում նա հսկայական գործունեություն է ծավալել, տպավորություններ ու մտահոգությունները գետնից «Քարավանները դեռ քայլում են», «Խճանկար հոգու և քարտեզի գույներից», «Քարավանները հեռանում են», «Իմ կածանը աշխարհի ճանապարհներից», «Յոգու նույն երթուղիներով» գրքերում: Սիյուռքում նա շատ սիրված էր ու միշտ սպասված: Ամենուր նրան զրկաբաց էին ընդունում:

**«Չեզ հաճախ եմ հարցնում՝ ինչո՞ւ 1997 թվականին լույս տեսավ այդ հրատարակումների ժողովածուն:**

«Դրանք «ամիչելի ժամանակներից»՝ 1940-50-ական թթ.-ից ամբարված նրա ելույթներն են, որ հիմնականում փակ պատերի մեջ են հնչել, պլենումներում ու համագումարներում արտասանած սուր քննադատական խոսքերը՝ մերկացնող, իրականությունը բացահայտող այնպիսի էջերով, որ ուղղակի մնում են ապշած: Նրան ամենուր դիմավորում էին զգաստությամբ, նրա մեծ ճշմարտությունը բացահայտող գրող, ես կասեի, մեր իրականության մեջ չկա: Եթե ուսանողները կարդան այս գիրքը սկզբից մինչև վերջ, կհասկանան, որ իրենք շատ բան չգիտեն իրականության մասին, կբացահայտեն նրա արարած ժամանակաշրջանը:

**«Տիկին Արմենուհի, ճի՞շտ է, որ Շիրազն ասել է, թե Միլվայի ստեղծագործությունները կրում են իր բանաստեղծությունների ազդեցությունը, ինչն էլ անհարկի շահարկվել է:**

«Ճիշտ եք ասում՝ անհարկի: Մարդիկ կան սուր զգացողությունների սիրահար են, բայց դա, մեղմ ասած, թյուրըմբռնում է: Շիրազն ու Կապուտիկյանը տարբեր մտածողությամբ ու ոճի բանաստեղծներ էին: Իսկ իրականում բոլորն էլ ազդեցություններ կրում են այս կամ այն շրջանում:

21 տարեկանում Ս. Կապուտիկյանը գրել է «Կլեոպատրան»: Դեռևս Շիրազի հետ որևէ առնչություն չունեի, թեև սովորում էին նույն կուրսում: Նույնիսկ խոստովանել է, որ ինքը փոքր, աննկատ աղջիկ էր, Շիրազը հետամտում էր բոլոր աղջիկներին և որ ամենավերջում է իրեն նկատել: Ու թեև շրջապատում շատերն են գաղափարել Միլվային, մայրն էլ է դեմ եղել, բայց նա ամուսնացել է... Այդ կապը տեսել է ընդամենը 4 տարի: Մի բանաստեղծության մեջ այդ մասին կարդում ենք.

Դո՛խքից էլ չեմ վախենում՝  
Չորսը տարվա փորձ ունեմ...

**«Արդյո՞ք Արան չի կարողացել լինել ծնողների կապող օղակ...»**

Մի բանաստեղծություն ունի, հուշերի մեջ էլ գրում է, որ օրինակած ծնունդ էր, ինքը ճաշակեց մայրության բերկրանքը, բայց կյանքի այնպիսի ջրբաժանում էր, որ անգամ երեխայի ծնունդը չփրկեց ընտանիքը, որովհետև երկու անհատների միջև չհասկացվածությունը չափազանց մեծ էր: Նրանք տարբեր ոճի բանաստեղծներ էին, իսկ այ, Կապուտիկյանը և Սևակը շատ էին հարգում միմյանց: Ես հիմա եմ հասկանում երկուսն էլ քաղաքատիպ մտածողության բանաստեղծներ էին, մինչդեռ Շիրազը՝ ավելի շատ բխումի, բնության, աշուղական երգն էլ նրան հարազատ էր...

Կապուտիկյանը մշտապես հոգ էր տա-

նում Շիրազի երեխաների մասին, երբ Արան գնում էր տեսնելու քույր-եղբայրներին, նրա հետ ունեյիք և գունար էր ուղարկում: Շատ սիրելով Սիփան Շիրազին՝ գրողների միության իր պարզակազմարդ փոխանցում էր նրան: Ամենակրտսերը՝ Վանանդը, Կապուտիկյանին ասում էր *մայրիկ* մեծ ակնածանք ու սեր տածելով նրա հանդեպ...

**«Բոլոր դեպքերում Միլվա Կապուտիկյանն ինքնաբերական է իրեն և խոստովանել:**

**Անփութ ասրեցի ես կյանքս բոլոր՝  
Մանուկի նման և բազուհու պես.  
Գուցե նրանից, որ թույլ եմ իրոք,  
Գուցե նրանից, որ ուժեղ եմ ես...**

«Այո, Ուժեղ մարդիկ բաց են լինում շրջապատի հանդեպ, որովհետև թաքցնելու բան չունեն... Ինչքան էլ խոցեն՝ նրանք անխոցել են մնում...

**«Երիտասարդությունը կարծես թե ծանոթ չէ Միլվայի արձակին:**

«Այո: Ես կասեի պոետիային էլ առանձնապես ծանոթ չէ:

2010 թվականին բանաստեղծուհու քառահատորյակը կազմելիս, երբ ես դեռևս ստեղծում էի «Միլվա Կապուտիկյան» գրական հիմնադրամը, բանաստեղծական շարքերն ուրույն կերպով դասավորեցի՝ «Սիրերգություն», «Յայերգություն», «Անանձնական», «Ձոներգեր և տագնապներ»...

Ձոներգերի թիվը տասնյակների է հասնում, և զարմանալի է, թե կարճ տարածության վրա ինչպես է կարողացել իր մեծարանքի ճիշտ խոսքը հղել՝ սկսած իր Արայիկից մինչև Ավետիք Իսահակյան, Սայաթ-Նովա, ժան Տեր-Ստեփանյան, Լևոն Էրմեքչյան... Վիլյամ Սարոյանի մասին երկու բանաստեղծություն ունի, ուր կոփված միտքն այնքան բյուրեղային է ներկայացնում... Մեկ քառատողի մեջ այնպես է ներկայացրել իսաչատուր Աբովյանին, Յոզիանեն Թումանյանին... Մեծերի արտակարգ բացահայտում է: Եվ երբ ձոներգերը միացնում ես, ահռելի փունջ է դառնում, Կապուտիկյանի միջոցով ճանաչում ես նաև մեր մեծերին:

**«Բանաստեղծուհին առավել ծանաչված է իր սիրային բանաստեղծություններով, այնպե՞ս չէ...»**

«Այդպես է, բայց նաև ասում է, թե շատ է վատնել իր սիրտը սիրային մոտիվների վրա, և որ ամենակարևորը հայրենիքն է: «Կանացի երգերից» բանաստեղծության մեջ խորհուրդ է տալիս.

Օ՛, Կարոլինա՛, օ, լեղի, օ, կին  
Բայրոնն էլ լինի դեմը՝ մի իջիր...  
Կամ ասում է.

Ի՛նչ էլ որ լինի, ժպիտ է բերում կինը թռչնահար

*Ուշացած սիրով իր տարածամի...*

Այսպիսի գեղեցիկ խորհուրդներ... Այնպես սիր, նրանք, ովքեր շատ են կենտրոնացում սիրային թեմաների վրա, թող կարդան Միլվա Կապուտիկյան և լսեն.

Պետք չէ, որ կյանքը խմես մինչև վերջ, մինչև մրուրը,

*Թող մի քիչ կարոտ մնա բաժակում...*

**«Եվ կարծես բոլոր հարցերի պատասխանները երիտասարդները կարող են քաղել Միլվա Կապուտիկյանի բանաստեղծական շարքերից, նաև կծանաչեն բանաստեղծուհուն:**

«Այո: Սկսած սիրերգությունից մինչև հայերգություն և անանձնական գործեր:

**«Միլվա Կապուտիկյանի բանաստեղծությունները շատ լեզուներով են թարգմանվել, հատկապես՝ ռուսերեն:**

«Բանաստեղծուհու ամբողջ պոետիկան թարգմանված է ռուսերեն՝ ամենահայտնի մեծերի կողմից՝ Եվգենի Եվտուշենկո, Անդրեյ Վոզնեսենսկի, Վերա Ջվյագինցևա, Մարիա Պետրովիչա...

Անգլերենի և ֆրանսերենի վրա ուշադ-

րություն չի դարձրել, որովհետև ռուսերեն թարգմանությունների վրա զուգահեռ աշխատում էր, հատ-հատ վերահսկում: Անգլերենի չիմացությունը նրան հետ է պահել մեծ գործերի թարգմանությունից, թե չէ կունենար համաշխարհային հռչակ, թեև սիրային և մանկական շատ գործեր թարգմանված են շուրջ 60-64 լեզուներով:

*«Կահիրեի հետ կապված մի հետաքրքիր դեպք կա, կպատմե՞ք:*

«Այո, Կահիրեում խանութ է մտել, որ հուշանվեր գնի, երբ երկու աղջիկ ծանաչել են, գրկել բանաստեղծուհուն և արաբերեն արտասանել նրա «Դու հեռացար» բանաստեղծությունը: Նաև ասել են, որ սիրային բանաստեղծությունները ձեռագիր արտագրում են ու գաղտնի բաժանում, որովհետև մոտուլմանական աշխարհում սիրերգությունը խրախուսված չէ:

**«Միլվա Կապուտիկյանը նաև հրաշալի թարգմանիչ է եղել...»**

«Այո, նա թարգմանել է պարսից պոետիկա՝ Ռուդաֆի, Յաֆեզ... Յայերեն չիմացող պարսիկները զարմացել են, երբ կարդացել են. այդպիսի զգացողություն չէին պատկերացնում: Տողացի թարգմանել է Արմանուշ Կոզմոյանը:

Շատ հայտնի է Կապուտիկյանի թարգմանությունը Վիկտոր Յուզովից: «Տղան» բանաստեղծության սկիզբը գիտե՞ք բոլորս. Թուրքերն անցան այստեղով՝ Ամենուր սուգ ու ավեր...

Կապուտիկյանը թարգմանել է և՛ Պուշկինի, և՛ Մարինա Ցվետաևայի, և՛ Լեսյա Ուկրաինկայի ու այլ հեղինակների ստեղծագործություններից: Կարողավ բանաստեղծուհու թարգմանությունները՝ կարծում եմ ընթերցողը կբացահայտի մի ընտիր ժողկեփունջ, որը բնագրից գրեթե չի տարբերվում...

Փոխադարձաբար, ռուս հասարակությունը շատ է սիրում Կապուտիկյանի պոետիկան և հատկապես սիրային բանաստեղծությունները, որոնցում նա շատ անկեղծ է.

Արի՛, արի՛, արի՛  
Թեկուզ վերջին անգամ,  
Թեկուզ քայլով դժկամ,  
Միայն արի՛, արի՛:  
Թեկուզ բերես դու ինձ  
Մի նոր դավի կակիժ,  
Թեկուզ ուրիշ գրկից,  
Միայն արի՛, արի՛...

Ռուսական կայքերը եթե մայք, կհամոզվեք, որ Մոսկվայից մինչև Վլադիվոստոկ, մինչև Յուսիսային սառուցյալ օվկիանոս հիմա էլ տարված են նրա պոետիկայով, որը չի հնամուսն և երբեք չի հնանալու:

**«Որ Շիրազը Արարատապաշտ է, գիտե՞ք, իսկ Միլվայի նման գործերին շատերը ծանոթ չեն:**

«Ինձ համար հայտնագործություն էր բանաստեղծուհու «Աղոթք Արարատին» պոետիկան բանաստեղծությունը՝ առաջին հայացքից ծանր, դժվար գործ: Ես «պեղեցի» Արարատին նվիրված 12 բանաստեղծություն և դրանցով օրացույց պատվիրեցի՝ Արարատի նկարներով: Նրա՝ Արարատին նվիրված ստեղծագործություններն անմրցելի են և չեն հոգնեցնում. և՛ նկարչություն կա մեջը, և՛ աշխարհագրություն, և՛ պատմություն, և՛ հոգու թրթիռ...

**«Տիկին Դեմիրճյան, Միլվա Կապուտիկյանի բանաստեղծություններով գրված երգերը տարիների հեռվից այսօր էլ սիրելի են բոլոր սերունդների համար...»**

«Այո, նրա գործերով շուրջ 100 երգ և ռոմանսներ են ստեղծվել: Նրա «Մախմուր աղջիկը» այսօր դարձել է հարսանյաց հանդեսներին հնչող սիրված երգ:

95-ամյակի գիրքը կազմելիս նրա դարակներից բանաստեղծուհու բավականին ծաղրանկարներ գտանք, որոնք նա ժպիտով է ընդունել... Կյանքի ամենապարբեր երևույթներն ու իրադարձությունները երբեմն վերածվել են բանաստեղծության, երբեմն էլ նրան պարզապես ավելի ուժեղ դարձրել, հոգին լցրել սիրով ու ջերմությամբ:

**«Անփոփելով՝ կարող ենք ասել, որ Միլվա Կապուտիկյանն ունեցել է առողջ հոգեկերտվածք, անձնական կյանքի անհաջողությունը երբեք զենք չի դարձրել, մնացել է բարձր ու վսեմ որպես «Յայաստան երկրի դուստր և բանաստեղծ»:**

«Կեցցեք, շատ ճիշտ բնորոշում տվեցիք. նա առողջ հոգեկերտվածքով անհատականություն էր, իր երկրին նվիրված բանաստեղծ և քաղաքացի:

Չորույցը՝ Միլվա ԱՍՐՅԱՆ

**«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՄԱՍԼՍԱՐԱՆ»**  
 պաշտոնաթերթի խմբագրության հյուրասրահում այս անգամ արցախցի Արինա Բաղդասարյանն է: **Նա Ասկերանի շրջանի Ակնադրյուր գյուղից է: 2020 թվականին տեղահանվել է Ակնադրյուր գյուղից, տեղավորվել Ստեփանակերտում, այնուհետև երկրորդ անգամ բռնի տեղահանվել նաև Ստեփանակերտից:**  
**Արինան սովորում էր Արցախի պետական համալսարանի Հոգեբանության ֆակուլտետի 3-րդ կուրսում, իսկ բռնի տեղահանումից հետո ուսումը շարունակում է Մաշատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հոգեբանության բաժնում, առկա ուսուցման համակարգում:**



**-Ինչո՞ւ և ե՞րբ տեղահանվեցիք Ակնադրյուր գյուղից:**  
 -Թշնամին սկզբում վերցրեց Ասկերանի շրջանի մի քանի գյուղ, այդ թվում և մեր գյուղը: Երբ սկսվեց պատերազմը՝ ծնողներս ապահովության համար մեզ ուղարկեցին Յալաստան, և էլ չկարողացանք գյուղ վերադառնալ: Հայրս ու եղբայրս պատերազմական գործողությունների մեջ էին,

## ԲԱՐԻ ՈՒ ԸՃՄԵՏՏ, ՆՊԱՏԱԿԱՍԼԱՅ ՈՒ ԸՃՍՏԱՏԱԿԱՄ ԱՐԻՆԱՆ

իսկ մայրս մեճակ մնացել էր տանը: Ես հայաստան եկա քույրիկիս հետ, իսկ մայրս մինչև հոկտեմբերի վերջը մնաց այնտեղ:

**- Արինա, ինչպե՞ս ես քեզ զգում հայաստանում: Կարողանո՞ւմ ես հարմարվել նոր միջավայրին ու պայմաններին:**

-Կարելի է ասել, որ դեռ հարմարման փուլում եմ, փորձում եմ ամեն կերպ հարմարվել: Թե՛ դասախոսները, թե՛ կուրսի ուսանողները օգնում են, որ նոր միջավայրում մեզ լավ զգանք:  
 Կուրսում ինձ հետ սովորում են նաև Արցախի պետական համալսարանի իմ երկու կուրսեցիները:

**-Կարո՞տում ես բարբառը:**  
 -Միայն կուրսում եմ խոսում գրական հայերենով, իսկ արցախցի ընկերուհիներիս հետ և ընտանիքում հիմնականում բարբառով եմ խոսում:

**-Ի՞նչ երազանքներ ունե՞իր մինչև 44-օրյա պատերազմը: Արդյո՞ք դեռ հոգով խորքում փայփայում ես դրանք: Ի՞նչ փոխեց պատերազմը քո մեջ...**

-Իրականում իմ մեջ ամեն ինչ փոխվեց 2020 թվականին: 2020 թվականին, երբ կորցրի իմ գյուղը, հույսս մարել էր, թե կարող եմ հետ գնալ, տեսնել հարազատ Ալևադրյուր գյուղը: Բայց փորձում էի Ստեփանակերտում էլ հարմարվել:

**-Բայց դու հայաստանում էիր, չէ՞...**  
 -Արտաշատի Արգավան գյուղի 12-րդ դասարանում մի քանի ամիս սովորեցի և վերադարձա Ստեփանակերտ՝ ուսումնա շարունակելու, որովհետև ինձ ավարտական վկայական չէին կարող տալ հայաստանում: 2021 թվականի փետրվարին վերադարձա Ստեփանակերտ՝ ինձ այնքան հարազատ, որովհետև նույն Արցախի հողն էր...

**- Ասացի՛ր, որ ազգակցական եղբայրդ զոհվել է 44-օրյա ընթացքում: Որտե՞ղ է կռվել:**

-Նա ապրում էր Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղում և որպես կամավորական վերջին պահերին այդ սահմանն էր պահում. զոհվել է Ծկոռ կոչվող վայրում...  
**-Դպրոցն ավարտելուց հետո ընդունվեցի՞ր Արցախի պետական համալսարան...**

-Այո, Ստեփանակերտում N 8 դպրոցն ավարտելուց հետո՝ 2021 թվականին, ընդունվեցի համալսարան: Նաև աշխատանքի տեղավորվեցի կոսմետիկայի և օժանդակի խմբում:

3-րդ կուրսի դասերը նոր-նոր սկսել էինք... Նորից պատերազմ սկսվեց: Երբ փակվեց ընթացքում ապրում էինք Ստեփանակերտի մի հյուրանոցում, որը տրամադրել էին մի քանի ընտանիքի: Վարձ չէինք տալիս:

**-Ծնողներդ որտե՞ղ էին աշխատում նախքան պատերազմը:**

-Մայրս մանկապարտեզում հաշվապահ էր աշխատում, հայրս՝ շինարարությունում: Այժմ հայաստանում էլ է հայրս աշխատում շինարարությունում, մայրս դեռ գործ չի փնտրում:

**-Հայաստանում կմնա՞ք, չե՞ք արտագաղթի: Վերադարձի հույս ունե՞ք...**

- Չէ, հայաստանից դրև տեղ չենք գնա, բայց վերադարձի հույսը միշտ կա, հավատում եմք...

**-Արցախի համալսարանում լավ էիր սովորում: Հասարակական ակտիվություն դրսևորո՞ւմ էիր:**

-Այնտեղ զմեռատման 20 բալային համակարգն էր գործում, ինձ 17 էր: Այո, ակտիվ հասարակական աշխատանք էի կատարում, մասնակցում էի միջոցառումներին:

**-Արցախցի կուրսեցիներդ ինչպե՞ս են հարմարվել:**

-Արևիկն ու Անգելինան էլ են փորձում հարմարվել: Արևիկն ապրում է Աբովյանում, իսկ Անգելինան Մասիսի գյուղերից մեկում՝ Նորամարգում: Արևը Շուշիից է, նա էլ է ինձ նման երկու անգամ բռնի տեղահանվել: Անգելինան Ստեփանակերտից էր: Կարծում եմ Անգելինայի համար Ստեփանակերտից հետո դժվար է հեռավոր գյուղում ապրել, բայց ինձ գյուղը հոգեհարազատ է, չեմ մեղվում Արտաշատի Արգավան գյուղում, որտեղ հաստատվել ենք ընտանիքով՝ հայրս՝ Միհրանը, մայրս՝ Նուրեն, եղբայրս՝ Նելսոնը, որ մասնակցել է պատերազմին, ինձանից մեծ է երեք տարով, քույրս՝ Լուսինեն, այժմ սովորում է Արգավանի դպրոցի 12-րդ դասարանում:

Երբ փակվեց ընթացքում մենք Ստեփանակերտի հյուրանոցում էինք: Դժվար էր: Որպես տարիանված՝ մեզ որոշ չափով օգնություն էին տվել, բայց այն սպառվում էր: Հիմնականում հացի ու ձեթի պակաս կար: Օր էր լինում, երբ

քաղաքում հաց չէր թվում, մենք ալյուրից հաց էինք քիտում: 9 ընտանիք էր ապրում այդ հյուրանոցում: Մեր տունը առանձին էր, գտնվում էր հյուրանոցի բակում: Բոլորս իրար օգնում էինք: Երբ 2023-ի պատերազմն ավարտվեց, վերջին օրերին ով ինչ ուներ՝ տնից բերում էր: Գազ չկար, լույս չկար: Բակում վառարան էինք դրել, որ նրանով հաց քիսեք:

**-Արինա ջան, երազանքներ ունե՞ս:**

-Երազանքս էր ընդունվել հոգեբանության բաժին, որպեսզի ավարտելուց հետո կարողանամ որպես հոգեբան աշխատել փոքր տարիքի երեխաների հետ: Բայց հիմա, երբ հանգամանքներից ելնելով, շատ բացթողումներ եմ ունեցել, չգիտեմ՝ կկարողանա՞մ իրականացնել ցանկությունս:

**-Պետք է հավատաս, առաջ նայես, չընկճվես ու գնաս երազանքիդ իրականացման հետևից...**

-Իրականում ես չէի ուզում շարունակել: Հուսահատվել էի... Ստածում էի նոր միջավայրին չեմ կարող հարմարվել... Բայց քանի որ 3-րդ կուրսում էի, մայրիկս հորդորեց, որ շարունակեմ:

**-Հե՞տ ես հարմարվում նոր միջավայրերին...**

-Ընդհակառակը, ես շատ դժվար եմ շփվում մարդկանց հետ, դժվար եմ հարմարվում նոր իրավիճակներին: Դա իմ թույլ կողմերից է: Բայց այստեղ ուսանողները շատ են օգնում ինձ այդ հարցում: Կուրսում 27 հոգի է սովորում: Դասախոսներն էլ լավ են: Նրանցից մեկին ճանաչում էինք մինչև այստեղ գալը: Դա Առաքելյան Աննան էր, ով հոգեբանական աշխատանք էր տանում մեզ հետ Ստեփանակերտում:

**-Դասերից հետո ինչո՞վ ես զբաղվում: Օգտվո՞ւմ ես մեր համալսարանի գրադարանից:**

-Այո, գրադարանի գրականությունից օգտվել եմ կուրսային աշխատանքս գրելիս:

**-Ո՞րն է կուրսային աշխատանքիդ թեման:**

-«Բռնի տեղահանված անձանց մոտ նկրտիզացիայի մակարդակի ստուգումը»: Դեկավարիս հետ ընտրեցինք թեման, որովհետև իմ շրջապատում շատերն են ենթարկվել նկրտիզացիայի, և ես ուսումնասիրություն իրականացրի նրանց շրջանում հոգեբանական վարժությունների ու թեստերի միջոցով: Արդյունքները համեմատեցի հայաստանում ապրողների հետ, և պարզ դարձավ, որ Արցախի աղջիկների ու տղաների մոտ նկրտիզացիայի մակարդակը շատ ավելի բարձր է, քան հայաստանի աղջիկների ու տղաների մոտ: Եվ դա հասկանալի է:

Երազանքս է վերադառնալ մեր տուն: Բայց քարտեզով նայել եմ և տեսել, որ մեր տունը այրել են, մի պատ է մնացել...

**-Ի՞նչ ես ամենից շատ զմեռատում մարդկանց մեջ:**

-Անկեղծությունը, նվիրվածությունը:

**-Դու քեզ կընթացարե՞ս մի քանի բառով:**

-Այո: Ես բարի եմ ու համեստ, հաստատական եմ ու նպատակասլաց:

**-Ինչպե՞ս ավարտեցիք բնաշրջանը:**

- 80-ից բարձր առաջադիմությամբ: Վերջինը պրակտիկայի պաշտպանությունն էր: 80 ստացա: Խրիմյան հայրիկի անվան № 10 դպրոցում եմ անցկացրել պրակտիկա:

**-Մեր պաշտոնաթերթի միջոցով ի՞նչ կուզեիր ասել:**

-Կուզեի շնորհակալություն հայտնել համալսարանի անձնակազմին՝ մեր կրթությունն այստեղ շարունակելու համարավորություն տալու համար, որ կարողանանք մասնագետ դառնալ... Մենք կաշխատենք արդարացի բոլորի հույսերը...

**-Ինչո՞ւ պետք է լավ սովորել:**

-Որ դառնամ լավ հոգեբան և մարդկանց կարողանամ օգնել, նրանց դուրս բերել դժվար իրավիճակներից:

**-Ապրես, Արինա ջան, ոչ մի դեպքում չկորցնես լավատեսությունդ ու հավատդ վաղվա օրվա նկատմամբ: Քեզ հաջողություն եմ մաղթում, հույսով, որ տարիներ հետո քեզ կտեսնեմ որպես կայացած մասնագետ՝ փորքվների հետ աշխատելիս:**

Հրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄԳ Բանասիրական ֆակուլտետը և Աբովյան քաղաքի N 2 հիմնական դպրոցը համագործակցության հետաքրքիր ավանդույթներ ունեն: Այս անգամ երկու կրթօջախներին միավորել էր հայ ակադեմիկոս Գրիգորյան Սևակը:

Մեծանուն հային էր նվիրված «Անցյալը ներկայացված» խորագրով ցերեկույթը՝ ՀՊՄԳ շրջանավարտ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անուշիկ Կիրակոսյանի, տարրական, միջին դասարանների աշակերտների ջանքերով և դպրոցի տնօրեն Արթուր Տաշչյանի նախաձեռնությամբ: Ամունք, երգ, բեմականացում, հետազոտական աշխատանք, այս ամենը մեկ միջոցառման շրջանակում:

«Պարույր Սևակի ստեղծագործությունն ազգային հարստություն է: Նա ապրում է, քանի դեռ աշակերտների շուրթերից հնչում են նրա անմահ երգերը»,- ցերեկույթի ավարտին մշեց Բանասիրական ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Նաիրա Խաչատրյանը: Վերջինս ծեռնարկի շրջանակներում հանդես եկավ բաց դասախոսությամբ:

ՀՊՄԳ Բանասիրական ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Աշոտ Գալստյանն էլ իր խոսքում ընդգծեց դպրոց-բուհ համագործակցության կարևորությունը և հույս հայտնեց, որ փոխադարձ այցելությունները շարունակական կլինեն, ինչպես նաև ուսանելի թե՛ ուսանողների՝ ապագա մանկավարժների, թե՛ ուսուցիչների համար:





## Լավագույններից մեկը

«Կենսաբանություն» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանողուհի Լիլիթ Սարգսյանը ճանաչվել է ֆակուլտետի «Լավագույն ուսանող-2023» մրցույթի հաղթող: Նա մշտապես աչքի է ընկնում հասարակական ակտիվությամբ, լավ է սովորում, հետաքրքիր նախասիրություններ ունի:

«Ես չէի էլ պատկերացնի, որ կգա մի օր, երբ ես էլ կմտածեմ «Լավագույն ուսանող» մրցույթին մասնակցելու մասին, մի բան, որին, կարծում եմ, թաքուն և անթաքույց ձգտում է ցանկացած ուսանող համալսարանական տարիների ընթացքում:

Մրցույթը լավ հնարավորություն է ինքդ քեզ հետ մրցելու: Որպես ուսանող՝ դու ձգտում ես ուսումնառության տարիներին հասնել չափանիշների, ինչչափսիք են՝ գերազանց առաջադիմությունը, հասարակական ակտիվությունը, ստեղծագործական և գիտական աշխատանքների առկայությունը և այլն, որոնք կարող են դարձնել քեզ մրցույթի մասնակից: Ընդունվելուց առաջ չէի էլ պատկերացնի, թե որքան հնարավորություն կարող եմ տալ ինձ համալսարանը և ֆակուլտետը, որոնց շնորհիվ էլ ես հասկացա, որ ընտրել եմ լավագույն մասնագիտությունը: Թերևս տարիներ առաջ դա այնքան էլ չէի գիտակցում»:

Լիլիթը խոստովանում է, որ առանց իր դասախոսների օգնության չէր հասնի այն ամենին, ինչին հասել է. «Երբ ինձ հարցնում են համալսարանի մասին, ես անմիջապես հիշում եմ դասախոսներին. ընկեր Պիպոյանին, ով ուղղորդեց ինձ ամեն երևույթը և առարկան տեսնել նորովի, լուսանկարելու միջոցով բացահայտել բնության այն փոքրիկ հրաշքերը, որոնց կողքով միշտ անտարբեր եմ անցել: Ես նրա խրախուսմամբ սկսեցի զբաղվել լուսանկարչությամբ, արդյունքում ես համալսարանում ունեցա իմ առաջին փոքրիկ, բայց ինձ համար նշանակալից ցուցահանդեսը:

Շատ լավ եմ հիշում՝ ինչը ստիպեց ինձ ձգտել սովորել գերազանց. դա իմ առաջին բանավոր քննությունն էր «Բուսաբանություն» առարկայից, որը հանձնեցի «գերազանց»: Ամենակարևոր դասախոսս՝ ընկեր Սիմոնյանի ոգևորությունն էր, որից հետո ես իմ առջև նպատակ դրեցի, որ իմ մնացած բոլոր քննությունների արդյունքները պետք է լինեն միայն այդպիսին:

Առաջին գիտական աշխատանքս գրել եմ ընկեր Թանգամյանի հետ: Չէի պատկերացնի, որ բույսերն ինձ կհետաքրքրեն այնպես, ինչպես հետաքրքրում էին փորձերի ժամանակ: Մեծ սիրով ու հետաքրքրությամբ կատարել եմ փորձերը և հաջողված աշխատանքից հետո հասկացել, որ կարող եմ շարունակական դարձնել աշխատանքներս...

Եթե ես շարունակեմ պատմել, կարծում եմ մի անբողջ գիրք կարող եմ գրել այս ամենի մասին: Մեծ սերն ու ձգտումը, որ ես ունեմ իմ ընտանիքի, համալսարանի, իմ դասախոսների, ընկերների հանդեպ, նպաստել են այսօրվա իմ մարդ տեսակի և ուսանողի կայացմանը, ով արդեն հասել է այն արդյունքին, որ կարող էր փորձել դառնալ մրցույթի մասնակից...»:

**Աստղիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
Կենսաբանության, քիմիայի և  
աշխարհագրության ֆակուլտետ,  
3-րդ կուրս



## Հայաթ ԿՈՒՆԲԵՐԻՆ

Ասում են կյանքում մարդու տեղն ու դերը որոշող գործոնը ճակատագիրն է՝ ի վերուստ կանխորոշված սկիզբն ու ընթացքը: Ծակատագիրը՝ ճակատագիր, բայց թե որքանով է մարդն անհատապես պատրաստ ընդունելու այդ կանխորոշումը, այնուամենայնիվ, կախված է իրենից, իր անհատական կերպարից ու ելքայինից: Այդ ամենն, անշուշտ, դրսևորվում է դեռ մանկուց, արտահայտվում մանկական խաղերից, սիրած ու նախընտրած խաղալիքներից, շրջապատի հետ ունեցած հարաբերություններից, բնավորության արտահայտման եղանակներից:

Դեռ փոքրուց ինձ համար սովորական էր դպրոց, աշակերտ, դասագիրք ու տետր հասկացությունները, այն ամենը, ինչը որ կապվում էր սովորել-սովորեցնելու հետ: Մայրս ուսուցչուհի էր, հայոց լեզու և գրականություն էր դասավանդում: Հետևաբար, ինձ համար երեկոները մայրիկիս ամենօրյա «զբաղմունքը» աշակերտական տետրերի հետ աշխատանքը տեսնելն էր, գրույցի թեման էլ դպրոցի ու դպրոցյան մասին էր:

Հետևաբար, անխուսափելի էր իմ ու նաև քրոջս մասնագիտական կողմնորոշման ուղղությունը՝ մանկավարժություն: Դե միջնակարգի շարունակությունն էլ, վստահաբար, պետք է լիներ մանկավարժականը՝ խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Ես ընտրեցի կենսաբանությունը, առարկա, որն, ըստ իս, ամենահիրական, ամենաստույգ և, այո, ամենազեղեցիկ ու պատկերազարդ գիտությունն էր:

Այսպիսով, Մանկավարժական դպրոցով իմ սիրելի վայրը, որտեղ ես ոչ միայն ուսանեցի իմ ընտրած առարկան, այլև սովորեցի մարդկային հարաբերությունների լեզուն, ճշմարտացի պարելու, հարաբերվելու արվեստն ու հմտությունները սիրելի և անմնացորդ նվիրումով դասախոսներից:

Տարիների հետ, որտեղ էլ տարավ ինձ ճակատագիրը, դարձյալ Մանկավարժականի հետ էի: Այստեղ անցա բարձրագույն կրթության երկաստիճան համակարգով, իսկ հետուհական կրթությունս շարունակեցի ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում՝ ստանալով կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, չդադարելով, սակայն, մնալ իբրև մանկավարժ:

2016 թվականից առ այսօր սիրով և հաճույքով եմ դասավանդում: Գործունեությունս սկսելով գյուղական կրթօջախում՝ Արագածոտնի մարզի Ոսկեհատի Խրիմյան Հայրիկի անվան միջնակարգ դպրոցում, այժմ այն ծավալում եմ Աշտարակի Ն. Աշտարակեցու անվան N 1 հիմնական դպրոցում:

Տարիների հետ նոր մտայնումներ ու մտահղացումներ եմ ունեցել՝ չդադարելով ուղորտում իմ տեղն ու դերը գտնելու փնտրտուքը: Այդ մղումով, թերևս, համաձայնեցի ներկայացվել «Ռուսական գրքի տունը Երևանում» և «Լիվըր» ընկերության հետ համատեղ կազմակերպված «Ռուսիցի» մրցանակաբաշխության «Նորարար» անվանակարգում: Արդյունքն արդարացից իմ սպասելիքը՝ Գլխավոր մրցանակ, որին արժանանալն ինձ համար նոր պատասխանատվություն և պարտավորվածություն է թելադրում, դպրոցին ու մանկավարժությանը առավել հիմնովին նվիրվելու լավագույն հնարավորություն, ինչի համար կրկին ու կրկին հայացքս հառում եմ դեպի մասնագիտությանս ձեռքբերման ակունքները՝ խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան:

**Լիլիթ ԱՎԵՏԻՍՅԱՆ**  
ՀԴՄՀ շրջանավարտ, Կենսաբանական  
գիտությունների թեկնածու



## Երազանքին վարասելով

Երազանքներին միշտ է պետք հետևել, իսկ իմ հերոսուհին՝ Նանեն, հետևեց ու հավատաց իր երազանքին: Նանեն իմ ներսի երազկոտ աղջիկն է, որը, ապրելով հիմադրորդ հարկում, պատուհանից նայում էր ամպերին ու մտածում, որ մի քանի իր դնելով ոտքերի տակ՝ կհասնի ամպերին: Ես այնտեղ ենթադրում էի գտնել խաղաղություն՝ թեկուզ մի քանի րոպե կտրվելով բոլորից: Ուզում էի մտել ամպի ուսին ու բոլորին ձեռքով անել: Սա թվում է՝ հասարակ, պարզ ցանկություն է, որ բոլոր երեխաներն ունեն կամ ունեցել են, բայց այս երազանքը չավարտվեց իմ մեծամալով, այլ ստիպեց ավելի ուժեղ կառչել նրանից: Եթե փոքր Օֆելին երազում էր ֆիզիկապես հասնել ամպերին, ապա մեծ Օֆելին հավատում էր ու է, որ անհնար ոչինչ չկա կյանքում. շատ աշխատել ու ինքդ քեզ հավատալ է պետք՝ հետևում թողնելով բոլոր խոչընդոտները, անվստահության խոսքերն ու նպատակիցդ քեզ հեռու պահող մարդկանց: Այս հեքիաթը նվիրելու եմ իմ աղջկան, ում ևս Նանե եմ կոչելու:

Այս հեքիաթով փորձել եմ մեկտեղել մի քանի կարևոր հանգամանք՝ երեխա-ծնող առողջ փոխհարաբերություն, չիրաժարվել նպատակներից ու երազանքներից, արժևորել մեր հայրենիքը, գնահատել մեր ունեցածը, հպարտանալ մեր սարերով, բնությամբ և ոչ օտարի շքեղությամբ: Նանեի ծնողներն ամեն կերպ աջակցում էին իրենց դստերը՝ միաժամանակ թողնելով նրան ինքնուրույն, նրան ոգևորում էին, քաջալերում, որ մանկուց հավատա իր ու իր երազանքերի ուժին:

«Գուրմե-Դուրմե» շոկոլադի տունն արդեն մի քանի տարի է՝ կազմակերպում է կարճ հեքիաթների մրցույթ, որտեղ մի քանի պարտադիր թեմաներ պետք է արծարծված լինեն (բնություն, հայրենասիրություն, սպորտ, բարոյական արժեքներ, շոկոլադ): Այս տարի որոշեցի համարձակություն հավաքել ու մասնակցել: Ամենավերջին օրն եմ հեքիաթս ներկայացրել, ու շատ-շատ էի ուզում ստեղծագործությունս հավանության արժանանալ՝ թեկուզ առանց մրցամակի: Գրեթե մեկ ամիս և ավելի սպասել եմ արդյունքներին, ու հայտարարված օրվա ավարտին՝ երեկոյան ժամը 22:00-ին, տեսնում եմ, որ իրենց սոցցանցի էջում գրել են հաղթողի անունը: Ինձ չէին ասել. ոչ նամակ էի ստացել, ոչ գրագ: Աչքերիս չէի հավատում, մի քանի անգամ կարդացի անուն-ազգանունս, իրենց գրեցի՝ հարցնելով, արդյո՞ք ծիշտ եմ կարդացել անունս, ե՞ս եմ հաղթել: Ամենկարգրելի զգացողություն է, որ գրած գնահատանքի է արժանանում, մարդիկ հավանում են: Հոգաչափ շնորհակալ եմ «Գուրմե-Դուրմե»-ի ողջ անձնակազմին՝ ի դեմս տնօրեն Դիրամ Բաղդադյանի՝ գեղեցիկ միջոցառման համար:

Հավատացեք և վստահեք ձեր երազանքին...  
**Օֆելի ԴԱՆԻԵՍՅԱՆ**  
ՀԴՄՀ Բանասիրական ֆակուլտետի  
շրջանավարտ



### ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐ

Խորին երախտագիտությամբ նշեն, որ միանգամայն վերջերս մեր սիրելի համայնքի հրատարակել է իմ «Խժաբերդը և կյանքիս շառավիղը» (հուշագրություն) գիրքը, որի մեջ տեղադրված 164 նկարների շարքում՝ զրքի նախավերջին էջում, երկուսը կան՝ մեկուն Սովետական Միության մարշալ Ա. Բաբաջանյանն է, գնդապետ Պավել Պապյանը և մի ռուս գնդապետ, մյուս նկարում Պավել Պապյանն է, Կիրովաբադի հայկական միջնակարգ դպրոցի դիրեկտոր Արամայիս Նազուխյանը և ես՝ դոցենտ Էդուարդ Մկրտչյանը:

Հիմա հարց է ծագում, թե ինչպես եղավ, որ այդ նկարները ևս տեղ գտան Խժաբերդին նվիրված հուշագրությունում, որտեղ ամենից առաջ տեղադրվել են գյուղի 32 տոհմ (իրենք ազգ էին ասում) ներկայացնող նկարները:

Այս անգամ կյանքիս շառավիղը ընթացավ դեպի Կիև. հաճելի առիթ կար, պետք է հանդիպել մեծ տղայիս՝ Վարուժանին, որ 1975 թ. ավարտելով մեր ինստիտուտի Պատմության ֆակուլտետի հասարակագիտության բաժինը, մեկնել էր բանակ և ծառայում էր Կիևում (ինձիցիայից ասեն, որ ընդունված էր ինստիտուտի շրջանավարտ տղաներին բանակ չուղարկել): Ես բացառություն եմ եղել, որ տղաներիս բանակ եմ ուղարկել. Վարուժանը Կիևում է ծառայել, Կառլենը, որ Բա-

Այդ նկարն է տեղադրված գրքում: Բայց Աղալոյիչը դրանով չբավարարվեց, նվիրեց մի նկար ևս, որում նույն երեք հոգին են՝ կանգնած վիճակում, և Բաբաջանյանը նկար է հանձնում Պավել Աղալոյիչին, իսկ երրորդ ընկերը ծափ է տալիս: Այդ նկարի հետևից գրված է՝ Эдуарду Самсоновичу от П. Папяна, 5.02.75 г. г. Киев.

Աղալոյիչին անընդհատ զանգում են, զբաղեցնում, ասում են.

«Պավել Աղալոյիչ, մեր գրույցը ընդհատվում է, լավ կլինի, որ գործից հետո հանդիպեմք:

Աղալոյիչը համաձայնում է. իր բնակարանի հասցեն ինձ է տալիս, որպեսզի ես գնամ այնտեղ, ինքն էլ գործից հետո գա, և տանը գրուցեմք:

Ընդունված կարգ է, դատարկածեղ չպիտի գնայի. հայկական կոմյակ, բաստուրմա և փոքրածավալ «ռադիոպրոյեկտոր» վերջին և բարձր տրամադրությամբ գնացի, գտա բնակարանը՝ բարձրահարկի 7-րդ հարկում: Կոճակը սեղմեցի, տղան դուռը բացեց և ասաց, որ հայրը դեռ չի եկել, իմ մասին էլ ասել է, տեղյակ է ու ներս է հրավիրել:

Ես ներս մտա, ծեռքիս եղածը տղային տվեցի, և այդ պահին խիստ զարմանք հարուցող մի պատմություն եղավ: Բազ-

### Վերհուշ

## Հայկական շունչ Կիևում



նախիրականն էր ավարտել, ծառայել է Ղազախստանում): Հունվարյան արձակուրդին՝ հայերիս բնորոշ պատրաստությամբ, մեկնեցի Կիև, հանդիպեցի Վարուժանին, ինչպես նաև նրա հրամանատար, փոխգնդապետ Կրավչենկոյին, ով գոհունակությամբ էր խոսում Վարուժանի մասին, որ հեշտ ու պատասխանատվությամբ էր ծառայում: Պարզ է, տրամադրությունս բարձրացավ, և նրան հրավիրեցի ռեստորան. եկավ ընկերուհու հետ, լավ անցկացրինք ու գրուցեցինք: Կրավչենկոն գոհ մնաց, ինձ էլ լավ հատկանիշներ վերագրեց՝ ասելով. «Մեր ռազմական ու զինվորական միջավայրում շատ մեծ ու հարգարժան հայ կա՝ Պավել Աղալոյիչ Պապյան՝ Կիևի տանկավերանորոգման գործարանի տնօրենն է, Էդուարդ Սամսոնիչ, շատ լավ կլինի, որ դուք նրա հետ ծանոթանաք»:

Կրավչենկոյի ցանկությունը ջուրը չնետեցի. այդ գործարանի մոտ գնացի, զանգեցի Պավել Աղալոյիչին, ներկայացա և ասացի, որ ուզում եմ հանդիպել: Ինքն էլ՝ թե.

«Միայն ջան, քարտուղարուհու մոտ սպասի, կկանչեն: Սիրունատես քարտուղարուհին մերս հրավիրեց. տեսա միջառասակ, ամուր կազմվածքով, բրոնզե դիմագծերով ու սև, արտահայտիչ աչքերով Աղալոյիչին: Նա մեղմ ժպիտով սիրալիկ ընդունեց, ձեռքով բարևեց և առաջարկեց նստել:

«Ղ, հայ պապերս...սասուն է մեղմորեն, դե՛ խնդրում են ներկայացնել և ասելք, թե ի՞նչը Ձեզ ինձ մոտ բերեց:

«Պավել Աղալոյիչ, ես դարաբաղի եմ՝ Հայրուրթի շրջանի Խժաբերդ գյուղից՝ Էդուարդ Սամսոնի Մկրտչյան, այժմ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Հայոց լեզվի ամբիոնի դասախոս եմ, դոցենտ: Տղաս՝ Վարուժանը, բանակային է և ծառայում է այստեղ՝ Կիևում, նրան տեսնելու համար եմ եկել, հանդիպել եմ, ամեն ինչ նորմալ է, և որևէ խնդիր չկա: Վարուժանի հրամանատարը՝ փոխգնդապետ Կրավչենկոն, միայն զովասանքի խոսքեր է ասել:

Նրա հետ ունեցած գրույցի ընթացքում Ձեր մասին արտակարգ փառաբանության խոսքեր է ասել, որ դուք՝ Կիևի ռազմական, զինվորական կյանքի եզակի օրինակ եք՝ ճանաչված և հարգված բոլորի կողմից: Հատուկ կարգով ու վստահությամբ էլ ինձ ասաց, որ ես հանդիպեմ, ծանոթանամ և ճանաչեմ Ձեզ՝ որպես բացառիկ երևույթ: Ահա թե ինչը ինձ բերեց Ձեզ մոտ, ավարտեցի խոսքս:

Աղալոյիչը ոգևորվեց, ծիծաղեց, ձեռքով շոյեց թիկունքս, թե. «Ըրված ա Ղարաբաղա լավ տղամարդկանցից ըս, դե՛ օյիդա վեր յընս ալ Գետաշենից ըմ. քոյիմա՝ Կյըսըշիմացե, հորըս անընդ Աղալո ա, ռուսները Աղալո են ասըմ, 30 տարի ա՝ տանկային շինարարությամբ ըմ ըզբաղված՝ Թիֆլիզում, Լվովում, հիմա էլ՝ Կիևում: Իմ դեկավարը, աստվածը Չարդախլուից մարշալ Բաբաջանյանն էր, նրան վերացրին, եթե մնար, ես էլ Մոսկվայում գեներալ կլինեի...»

Աղալոյի որդին ասաց ու հուզվեց և դարակից հանեց այն նկարը, որում Բաբաջանյանն է՝ կանգնած, ինքը և ռուսը՝ նստած, և ամմիջապետ տվեց ինձ. հետևից գրված է՝ П. Папян, 5.02.75 г., город Киев:

մոցին նստած մի տղամարդ կար, նայեցի նրան և ասացի.

«Դու կիրովաբադցի Արմոն չե՞ս»:

Ասաց.

«Յա, Արմոն եմ, բա դուք ո՞վ եք (քաղաքավարի է խոսում՝ հոգնակի թվով):»

«Ես էմ խժաբերդցին եմ, 25-26 տարի առաջ ծին խոս բարձած, աղբյուրից ջուր էինք խմում, դու և Վիլեն Գրիգորյանը մոտեցաք, իրար ձեռք բռնեցինք, Վիլենը քեզ ներկայացրեց, ասաց, որ Կիրովաբադ քաղաքից ես, և երկուսով սովորում եք ԱՄՆ-ում՝ Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտում, հիմա եկել է խժաբերդ հանգստանալու:

Հետո այլևս չենք հանդիպել:

«Վա՛յ, Էդիկ ջա՛ն, դո՛ւ ես, փաթաթվեցինք, շարունակեց-արա՛, պա ես հունցըս հիշալ, ա՛ թո տունը շինվի...»

«Արմո՛, պա տու՛Պավել Աղալոյիչի տանը հինգ է՛ս անուն, ասում են»:

«Վիպե՛ր, ես էլ Կիրովաբադում մեր հայկական դպրոցի դիրեկտորն եմ, ես ու Պավելը «բաջանաղներ» (քենակալներ) ենք, ես ձեռնային արձակուրդին էկել եմ՝ իրեն տեսնելու:

Խժաբերդում մեր հանդիպման ժամանակ ես էլ ուսանող եմ եղել Երևանում: Դրանից հետո ավարտել եմ, աշխատանքի անցել Սիսիանի դպրոցներում, ըստմանից կազմել, Վարուժանն է ծնվել, սովորել դպրոցում և բուհում: Ես 7 տարի դպրոցում աշխատելուց հետո ընդունվել և ավարտել եմ ասպիրանտուրան, դարձել դասախոս, դոցենտ: Այդ ամենից հետո Վարուժանը զինվոր դարձավ... Առիթ եղավ հանդիպելու կիրովաբադցի Արմոյին՝ Արամայիս Նազուխյանյանին:

Պավել Աղալոյիչը տուն եկավ, և Արմոն պատմեց մեր զարմանահարաշ հանդիպման և բացառիկ հիշողության մասին:

Հոյակապ անցկացրինք ժամանակը: Պավելը շատ հետաքրքիր պատմություններ արեց ռազմական կյանքից և ականավոր գործիչներից, առանձնակի սիրով և ավստասանքով՝ մարշալ Բաբաջանյանի մասին, ասաց նաև, որ իր դիսերտացիայի մշակման խնդիրներով զբաղվել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում, տեխնիկական գիտությունների թեկնածու էր:

Իմ և Արմոյի ուշադրությունը երկու խնդրի վրա հրավիրեց.

ա) պատրաստ լինե՞նք մասնակցելու իր ծննդյան 60-ամյակը նշելու արարողությանը,

բ) այցելե՞նք Կիևի՝ մարշալ Բաբաջանյանի անունով N 227 ռուսական միջնակարգ դպրոցը, որը հիմնադրել է մարշալը խիտ բնակեցված զինվորականների երեխաների համար, որտեղ կա նաև մարշալ Բաբաջանյանի անվամբ թանգարան:

Կիևի ծայրամասային միակրկանի ռեստորանում նշվում էր Պավել Աղալոյիչի ծննդյան 60-ամյակը. ինձ և Արմոյին հետաքրքրում էին մասնակիցների խոսքերը, դրավտանքի աստիճանը, 7-8 գեներալներ կային, որ երկար-բարակ չէին խոսում. «За Паведа Агалоича» էին ասում, կոմյակն անցկացնում: Պավելի շնորհակալական խոսքից հետո մի սպիտակ ու լայն փռվածքով շոր փռեցին սեղանին, մասնակիցները շրջանագծեր են քաշում, ներսում նշում իրենց ու լինելը և ստորագրում: Գեներալներից հետո մենք էլ այդպես վարվեցինք. Արմոն գրեց. Арамаис Назлуханян, директор Кировабадской армянской школы. Подпись, ես գրեցի. ЭДУАРД МКРТЧЯН, доцент Ереванского Педагогического института имени Хачатуря Абовяна, Подпись.

Պատշաճ կարգով նշելով ծնունդը՝ Պավելին տուն ենք տանում, երեքուս միասին նկարվում ենք (Դա այն նկարն է, որ նույնպես տեղադրված է Խժաբերդին վերաբերող գրքում): Արմոն ասում է, որ հաջորդ օրը մեկնելու է Կիրովաբադ. արձակուրդն ավարտված է, ես էլ ասացի, որ պիտի փնտրեմ ու այցելեմ այն դպրոցը, որի մասին Աղալոյիչն ասաց, որը թանգարան ունի մարշալ Աղալոյիչի անունով: Հասցեներ փոխանակեցինք ու բաժանվեցինք:

Ես գտա այդ դպրոցը, ներկայացա և խնդրեցի ներս թող-



նել: Ներս մտա, դեպի աջ մի քանի քայլ անցա ու կարդացի գրածը. Музей имени Маршала Бабаджаняна. 3-4 աստիճան բարձրացա, ներս մտա, ամենը տեսա, կարդացի, ինքնագրության չափ ու սահման չկար: Խնդրեցի ուսուցչանոց տանել և ծանոթացնել դիրեկտորի հետ: Հանդիպեցի նրան. մասնագիտությամբ պատմաբան էր: Նրան հարցրի, թե ինչով կարող եմ օգտակար լինել: Եվ նա ասաց, որ Բաբաջանյանը «ռեմեյլենցի» է եղել, իրենք տվյալներ չունեն դրա մասին ու շատ կուզեն, որ փաստական տվյալներով հաստատվի այդ իրողությունը:

Ես նրանց հանգստացրի, ասացի, որ այդ խնդրով կզբաղվեմ և ամռանը մի բան կասեմ:

Այդ խնդրի հարցում շրջադարձ եղավ:

Բաբաջանյանի քրոջ տղան՝ Տիգրան Քոչարյանը, Մանկավարժական Պատմության ֆակուլտետի ուսանող էր, և մենք իրար գիտեցինք: Ես իմացա, որ երևանում է՝ Հակոբ Հակոբյանի անվան դպրոցում՝ որպես դիրեկտոր: Հանդիպեցի նրան և պատմեցի այն դպրոցի և Բաբաջանյանի թանգարանի մասին:

«Էդիկ ջան, շատ եմ զբաղված, չկարողացա այցելել նույնիսկ քեռուս թանգարանը, ժպտալով այսպես է արդարանում Տիգրանը:

Տիգրանին ասացի՝ թանգարանին փաստացի տվյալ է պետք, որ Բաբաջանյանը «ռեմեյլենցի» է եղել, ես էլ խոստացել եմ օգտակար լինել:

Մարշալի թանգարանի համար հետևյալ ցուցանմունքներն են հայթայթել.

1. Տիգրանը մի հրեա մայրիկ մասին ասաց, որ Բաբաջանյանի հետ «ռեմեյլենցի» է եղել, Երևանում էր բնակվում: Հանդիպել եմ նրան և նկարներ վերցրել, պատճենահանել, էլի վերադարձրել եմ իր նկարները: Կարևոր փաստարկն արդեն կար:

2. Աջափնյակի մի փողոցում մարշալներ Բաղդասյանի և Բաբաջանյանի ծննդավայր Չարդախլու գյուղից երկու հորեղբոր տղաներ ու մի կին՝ ֆոտոնկարչությամբ էին զբաղվում, կապ ունեին գյուղի հետ, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների մեծ «վիճեցակ» էին պատրաստում: Ես խնդրեցի թանգարանի համար Բաբաջանյանի ծնողների գերեզմանից մի բուռ հող բերեմ և, թեև հարյուրավոր «վիճեցակների» հետ դժվար էր, բայց բերեմ ինձ: Այդպես էլ արեցին:

3. Ինստիտուտի քիմիայի լաբորատորիայից Կարեն Խուրավերդյանը մի փորձանոթ ընտրեց, այդ սուրբ հողը մեղը լցրեց և ինձ տվեց:

4. 1976-ի՝ «Дружба народов» ամսագրի մի ամբողջ համարը տրամադրված էր մարշալ Բաբաջանյանի ծննդյան տոհմին: Վերջին մեկ օրինակ է:

Ամառը եկավ, Վարուժանը դեռ զինվոր էր Կիևում: Ես, կինս՝ Սոնիկը, քույրս՝ Ստելլան, և նրա ամուսին Էդիկը մեկնեցինք Կիև. Վարուժանին տեսնելու լավ առիթ էր:

Ես վերևում նշած իրեղենները տարա Բաբաջանյանի անվան դպրոց, հանձնեցի թանգարանին. ինձ սիրալիկ ընդունեց և ողջ կուլեկտիվը, և հատկապես դպրոցի տնօրենը. դրվատանքի խոսքեր ասացին, անչափ շնորհակալ եղան, և պարզ է՝ ես ինձ շատ լավ զգացի:

Հետագայում այդ դպրոցում չեն եղել, այժմ էլ ինձ հետաքրքրում է՝ կա՞, թե՞ չկա...

Իմ և կիրովաբադցի տնօրենի՝ Արամայիս Նազուխյանյանի միջև մասնակազրական կապ կար: Վերջին մասնակուս գրեց, որ Պավել Աղալոյիչի ծնունդը նշելուց հետո նա առողջարան է գնացել և այնտեղ էլ՝ հենց 60 տարեկան հասակում մահացել:

Անորոշ եղավ Կիրովաբադի հայաթափունից հետո Նազուխյանյանի ճակատագիրը:

Վարուժանը տուն վերադարձավ Կիևում զինվորական ծառայությունն ավարտելուց հետո:

Այսպիսով փակեմ կյանքիս՝ Կիևին առնչվող շառավիղով արձանագրված ուրախ օրերի և տխուր ավարտների հուշերի ամրաթել կծիկը:

Էդուարդ ՄԿՐՏՉՅԱՆ

Պետության կողմից տրամադրվող 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների վարձի գեղչի դիմումները համապատասխան փաստաթղթերով ընդունվում են փետրվարի 9-ից մինչև մարտի 7-ը:

Գրանցման վկայական՝ 01U00184 տրված է 26.03.2008 թ. Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97: Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com Ծավալը՝ 2 տալ. մասով

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը կարող էք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՄՐԱՆ Բանասիրական գիտությունների թեկնածու Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐՈՒՅԱՆԻ